

ԱՄՅ ԴԵՐՆ ԴՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը ԱՄՀ-ին անդամակցել է 1992թ. մայիսի 28-ին: ՀՀ-ի քվոտան կազմում է 92 մլն SDR (մոտ 116 մլն ԱՄՆ դոլար) կամ քվոտաների ընդհանուր գումարի 0.04%-ը: Հայաստանին պատկանում է 1.170 ձայն կամ ԱՄՀ-ում ձայների 0.05%-ը: ԱՄՀ-ի Համաձայնության հոդվածների VIII հոդվածով նախատեսվող ընթացիկ հաշվի փոխարկելիության գծով պարտավորությունները Հայաստանն ընդունել է 1997թ. մայիսի 29-ին:

Ակտիվ բանակցությունները, որոնք ծավալվեցին ԱՄՀ-ի և նախկին ԽՍՀՄ պետությունների՝ այդ թվում ՀՀ-ի միջև, պայմանավորված էին այդ երկրների ճգնաժամային իրավիճակով: Արտադրական նախկին կապերի խզումը, պատերազմական իրավիճակը, շրջափակումը տարել էին արտադրության, առևտրի և զբաղվածության անկման: Այս ժամանակաշրջանում մի շարք միջազգային ֆինանսական կառույցների հետ համատեղ կառավարությունը ձեռնարկեց մակրոտնտեսական կարգավորման և կառուցվածքային բարեփոխումների բազմակողմանի ծրագրի իրականացումը:

Հայաստանի մանակցությունը ԱՄՀ-ի ծրագրերին սկսվեց 1994թ., երբ Համակարգային վերականգնման վարկային ծրագրի (STF) շրջանակներում Հայաստանը գնեց 16.9 մլն SDR՝ ՀՀ Կենտրոնական բանկի պահուստների համալրման և վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հետ կապված հիմնահարցերի լուծման համար: Սա իրականացվեց նույն թվականի սեպտեմբերին կնքված համաձայնագրի հիման վրա, որի պահանջներից էին դրամավարկային քաղաքականության գործիքների ստեղծումը, ամսական գնաճի մակարդակի մինչև 1% ապահովումը, արժույթային քաղաքականության բարելավումը, գանձապետական համակարգի ստեղծումը, հարկային և մաքսային քաղաքականության բարելավումը: 1995թ. Հայաստանը STF ծրագրի շրջանակներում գնեց ևս 16.9 մլն SDR: Նշված ծրագրի շրջանակներում ստացված վարկի համար սահմանված էր 4.6 % տոկոսադրույք՝ 10 տարի հետո վերադարձման ժամկետով, ընդ որում հիմնական գումարների վերադարձման համար սահմանված է 5 տարի արտոնյալ ժամկետ¹:

1995թ. հունիսի 28-ին ԱՄՀ-ն հաստատեց Հայաստանին 43.9 մլն SDR վարկ տրամադրելու ծրագիրը: Նախատեսվող վարկային ծրագիրն ուղղված էր 1994թ. սկսված մակրոտնտեսական կայունացման միտումների ամրապնդմանը: Կայունացման վարկի նպատակները համահունչ էին տնտեսական աճի կայունացմանն ու բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված կառավարության ծրագրին: Իրականացված միջոցառումների արդյունքում կառավարությունը հիմնականում կատարեց վարկային ծրագրի պայմանները: Մակրոտնտեսական կայունացման արագ տեմպերը հիմքեր ստեղծեցին վարկային ծրագիրը բավականին արագ ավարտելու համար: Շուրջ 8 ամիս տևած ծրագրի ընթացքում 1995թ. Հայաստանին տրամադրվեց 13.5 մլն SDR, որի մարումն սկսվեց 1998թ., իսկ 2000թ. այդ վարկի գծով Հայաստանի պարտքը ԱՄՀ-ին ամբողջությամբ մարվեց:

1996թ. փետրվարի 14-ին ԱՄՀ տնօրենների խորհուրդը հաստատեց Ընդլայնված կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագիրը (ESAF): Այս ծրագրի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկը ստացավ 109.4 մլն SDR, որն ուղղվեց բանկի պահուստների համալրմանը: Այս ծրագրի հիմնական նպատակն էր 1996-1998թթ. արագացնել կառուցվածքային բարեփոխումները՝ կայուն և բարձր տնտեսական աճն ամրագրելու համար: Զննարկվող

¹ Killick T., IMF Programs in Developing Countries: Design and Impact, Routledge 1995.

ժամանակահատվածում համակարգային բարեփոխումները ներկայացվում էին խոշոր պետական ձեռնարկությունների սեփականաշնորհմամբ և վերակազմավորմամբ, ինչպես նաև շուկայական ինստիտուտների ստեղծմամբ:

ԱՄՀ-ի հետ համատեղ ծրագրերի իրականացման արդյունքում զգալի առաջընթաց տեղի ունեցավ Հայաստանում մակրոտնտեսական կայունության և աճի վերականգնման ուղղությամբ՝ կառավարության՝ 1996-1999թթ. տնտեսական բարեփոխումների ծրագրի շրջանակներում, որն իրականացվում էր ԱՄՀ-ի ESAF ծրագրի աջակցությամբ: Այսպես, օրինակ, 1995թ. մինչև ESAF ծրագրի իրականացումը սպառողական գների ինդեքսի միջին տարեկան ցուցանիշը կազմում էր 175.8%, սակայն արդեն 1999թ.՝ ընդամենը 0.6%¹: Ծրագրի իրականացման տարիներին ՀՆԱ-ի իրական աճի ցուցանիշը միջինում կազմում էր 5.3%՝ չնայած ներքին և արտաքին գործոնների անբարենպաստ ազդեցությանը: Նկատվում էր նաև վճարային հաշվեկշռի որոշակի բարելավում: Այսպես, օրինակ, եթե 1996թ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը (առանց պաշտոնական տրանսֆերտների) ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 25.5%, ապա բարեփոխումների իրականացման արդյունքում 1999թ. այն կազմեց 21.7%՝ կրճատվելով 3.8 տոկոսային կետով²: Արդյունքում այս ծրագրի իրականացումը նպաստեց կայուն տնտեսական աճի նախադրյալների ձևավորմանը:

ESAF-ի իրականացման ընթացքում Հայաստանում զգալի առաջընթաց է նկատվել նաև կառուցվածքային բարեփոխումների բնագավառում, մասնավորապես բանկային համակարգի բարեփոխումների, գանձապետական համակարգի ստեղծման, սոցիալական ապահովության ամրապնդման և հարկային օրենսդրության ոլորտներում:

1999թ. միջազգային ֆինանսական կազմակերպությունները վերանայեցին իրենց մոտեցումները զարգացող երկրների հետ համագործակցության հարցում: Մասնավորապես, 1999թ. ԱՄՀ-ն Ընդլայնված կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագիրը վերանվանեց Աղքատության կրճատման և տնտեսական աճի (ԱԿՏԱ) վարկային ծրագիր և վերաձևակերպեց ծրագրի նպատակները: Ծրագիրը համապատասխանեցվեց աղքատության հաղթահարման ռազմավարությանը: 2001թ. սկզբին կառավարության կողմից մշակվեց աղքատության հաղթահարման միջանկյալ ռազմավարությունը, որով սահմանվեց աղքատության դեմ պայքարին պետական միջոցներն ուղղելու ծրագիր: 2002թ. կեսերին կառավարությունը նախաձեռնեց քննարկումներ կառավարության և հասարակական կազմակերպությունների, արհմիությունների և դոնոր կազմակերպությունների միջև՝ աղքատության կրճատման ռազմավարությունը վերջնական տեսքի բերելու համար: Կառավարությունը խնդրեց այդ մարմիններին ներկայացնել իրենց առաջնահերթությունները համապատասխան աշխատանքային խմբին, որը բաղկացած էր պետական ավագ պաշտոնյաներից և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Գործընթացի արդյունքը ԱԿՏԱ-ի՝ տնտեսական և սոցիալական բարեփոխումների բազմամյա ծրագրի մշակումն էր: ԱԿՏԱ-ն կառավարության կողմից պաշտոնապես ընդունվեց 2003թ. օգոստոսին:

ԱԿՏԱ-ի շրջանակներում 2001թ. մայիսի 21-ին ԱՄՀ Գործադիր խորհուրդը հաստատեց Հայաստանին 69 մլն SDR (մոտ 87 մլն դոլար) գումարի վարկի տրամադրումը: Ծրագրի տևողությունը 3 տարի էր, որի նպատակն էր աջակցել կայուն տնտեսական աճի խթանմանը, որը Հայաստանի կառավարության աղքատության հաղթահարմանն ուղղված ջանքերի համար ամենակարևոր նախապայմանն է:

ԱԿՏԱ ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության միջնաժամկետ ռազմավարության նպատակներն են.

¹ Burku E., Ali M. Kutan, IMF-Supported Programs in Transition Economies: Are they Effective?; Comparative Economic Studies, Vol 47, 2005.

² Հայաստանի ֆինանսների վիճակագրությունը 1994-1998թթ.:

- մակրոտնտեսական քաղաքականության բնագավառում կայուն տնտեսական աճին նպաստող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների իրականացումը՝ գների կայուն մակարդակի ապահովման պայմաններում,
- բյուջեի պակասուրդի աստիճանական նվազեցում և կուտակված ապառքների մարում ու նոր ապառքների չկուտակում, սոցիալական ծախսերի նպատակայնացում և դրանց հնարավորինս բարձրացում, հարկային եկամուտների աստիճանական բարձրացում, բյուջետային համակարգի բարեփոխումներ և բյուջեի ծախսերի կառավարման բարելավում,
- վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի աստիճանական կրճատում,
- չվճարումների պրակտիկայի բացառում (էներգետիկ, ոռոգման, ջրամատակարարման ու ջրահեռացման և այլ ոլորտներում), որի արդյունքում կկրճատվի այս ոլորտներում ֆինանսական ճեղքվածքը,
- կառուցվածքային բարեփոխումների կառավարման բնագավառում համապատասխան միջոցառումների իրականացում, մասնավորապես պետական հատվածի բարեփոխումներ և քաղաքացիական ծառայության համակարգի ներդրում և հակակոռուպցիոն ծրագրի մշակում,
- աղքատության կրճատում, որը ծրագրի անկյունաքարն է, և եկամուտների բաշխման անհավասարության հարթեցում, ինչը հնարավոր չէ առանց տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման:

2003-2004թթ. կառավարության ծրագրերի շուրջ ԱՄՀ բանակցությունների հիմնական ուղղվածությունը եղել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին համահունչ հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը: 2005թ. մայիսի 25-ին ԱՄՀ-ի Գործադիր խորհուրդը հաստատեց աղքատության կրճատման և տնտեսական աճի վարկի ներքո եռամյա ծրագիրը, որով Հայաստանին էր հատկացվում 23.0 մլն SDR (շուրջ 34.6 մլն դոլար) /աղյուսակ 1/:

2001-2004թթ. ԱՄՀ-ի աղքատության կրճատման և տնտեսական աճի վարկի աջակցությամբ իրականացվող տնտեսական նոր ծրագրի արդյունքում տեղի ունեցավ ֆինանսական համախմբում, և խորացան կառուցվածքային բարեփոխումները: Ծրագիրն ուղղված էր ֆիսկալ և քվադի-ֆիսկալ դեֆիցիտների կրճատմանը, պետական ծախսերի կառուցվածքի փոփոխմանը, ներքին և արտաքին ապառքների մարմանը, պարտքի ցուցանիշների նվազեցմանը, ճկուն փոխարժեքի միջավայրում զգուշավոր դրամավարկային քաղաքականության իրականացմանը: Կառուցվածքային բարեփոխումների օրակարգը վերանայվեց՝ ընդգրկելով բարեփոխումներ, որոնք ուղղված են կայունացմանը, խոցելիության կրճատմանը և միջնաժամկետ աճի հնարավորությունների ամրապնդմանը: Գործարար միջավայրի բարելավումը, բանկային համակարգի ամրապնդումը, հարկային և մաքսային վարչարարությունը, ծախսերի կառավարումը և էներգետիկ հատվածի ու ջրային տնտեսության արդյունավետության բարձրացումը դարձան բարեփոխումների օրակարգի առանցքային խնդիրները:

ԱՄՀ և ՀՀ համագործակցությունը 1994-2006թթ. (հզր. SDR)

	Հիմնական ռեսուրսների հաշվառում			ԱԿՏԱ/ԸԿԲԾ			Ընդհանուր գումարը		
	Գնումներ		Տոկոսների վճարում	Վարկեր		Տոկոսների վճարում	Գնումներ և վարկեր		Տոկոսների վճարում
	Հատկացված գումար	Վերադարձված գումար		Հատկացված գումար	Վերադարձված գումար		Հատկացված գումար	Վերադարձված գումար	
2006	0	0	0	3,280,000	17,402,500	299,591	3,280,000	17,402,500	299,591
2005	0	1,406,250	43,673	6,560,000	21,870,000	653,687	6,560,000	23,278,250	697,360
2004	0	5,625,000	160,417	19,000,000	17,685,000	683,000,485	19,000,000	23,310,000	843,902
2003	0	7,031,250	282,817	20,000,000	11,812,500	660,453	20,000,000	18,843,750	943,270
2002	0	5,625,000	511,119	20,000,000	8,437,500	591,630	20,000,000	14,062,500	1,102,749
2001	0	5,625,000	1,092,479	10,000,000	1,687,500	574,111	10,000,000	7,312,500	1,666,590
2000	0	11,953,125	1,628,567	0	0	546,750	0	11,953,125	2,175,317
1999	0	9,562,500	1,710,544	20,925,000	0	464,482	20,925,000	9,562,500	2,175,026
1998	0	421,875	2,209,470	37,800,000	0	324,896	37,800,000	421,875	2,534,366
1997	0	0	2,170,430	16,875,000	0	211,515	16,875,000	0	2,381,945
1996	0	0	2,099,075	33,750,000	0	88,759	33,750,000	0	2,187,834
1995	30,375,000	0	1,137,114	0	0	0	30,375,000	0	1,137,114
1994	16,875,000	0	0	0	0	0	16,875,000	0	0

Աղբյուրը՝ www.imf.org

Ծրագիրը համապատասխանեցվեց Հայաստանի աղքատության հաղթահարման ռազմավարությանը: Ռազմավարությունը պարունակում է աղքատության, եկամուտների անհավասարության և մարդկային զարգացման նպատակային ցուցանիշներ, որոնք համապատասխանում են հազարամյակի զարգացման նպատակներին /աղյուսակ 2/:

Աղյուսակ 2

ԱՀՌԾ-ի հիմնական նպատակային ցուցանիշները¹

	2001 փաստացի	2015
Աղքատության ցուցանիշ (%-ներով)	47	20
Օրական 2 ԱՄՆ դոլարից ցածր եկամուտ ունեցող բնակչություն (%-ներով)	24	7
Եկամուտների անհավասարություն (Ջինիի գործակից)	0.54	0.44
Մանկամահացությունը 1.000 նորածինների հաշվով	35	9
Տարրական կրթության համակարգում ընդգրկվածության ցուցանիշ	97	100
Խմելու ջրի հասանելիությունը գյուղական շրջաններում (%-ներով)	42	70

Վերջին 13 տարիների ընթացքում ԱՄՀ-ն ՀԲ-ի և միջազգային այլ կազմակերպությունների հետ միասին ՀՀ-ում իրականացրել է լայնածավալ տնտեսական բարեփոխումներ: ԱՄՀ-ի փորձագետների գնահատմամբ 2006թ. կառուցվածքային բարեփոխումների բոլոր պարամետրերով Հայաստանը առաջ էր կանգնած ԱՊՀ մնացած երկրներից, թեև հետ էր մնում Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրներից:

¹ «Աճ և աղքատության կրճատում Հայաստանում», նվաճումներ և մարտահրավերներ, ԱՄՀ:

Մասնավորեցման գործընթացը գրեթե ավարտված է: Հողային բարեփոխման արդյունքում ստեղծվել են մոտավորապես 300.000 մասնավոր և կոլեկտիվ տնտեսություններ, և խթանվել են հողի առք ու վաճառքի գործառնությունները:

Արժույթային ռեֆինի և սպառողական զների ազատականացումը տեղի ունեցավ անցումային փուլի սկզբնական շրջանում: Ապրանքների և ծառայությունների մեծ մասի գներն ազատականացվեցին մինչև 1995թ. (բացառությամբ հացի, կոմունալ ծառայությունների, քաղաքային տրանսպորտի և դեղագործական ապրանքների), միաժամանակ կրճատվեցին կամ վերացվեցին բազմաթիվ սուբսիդիաներ: 1995թ. տեղի ունեցավ զների հետագա ազատականացում:

Իրական ՀՆԱ-ն 2001-2006թթ. աճեց 11.5%՝ պայմանավորված շինարարության և ծառայությունների ոլորտներում աճի բարձր տեմպերով, ինչպես նաև արտերկրից փոխանցումների մեծածավալ ներհոսքով և արտարժույթի այլ ներհոսքերով, որոնք նպաստել են ներքին պահանջարկի ավելացմանը: Նույն ժամանակահատվածում գնաճի միջին ցուցանիշը մնացել է ցածր՝ 1.5%: Արտահանումը 2006թ. առաջին կեսին աճել է ընդամենը 2%-ով՝ հիմնականում պայմանավորված ադամանդի նկատմամբ միջազգային պահանջարկի ցածր մակարդակով: Նույն ժամանակահատվածում ներմուծումը շարունակել է աճի բարձր տեմպ արձանագրել՝ 20%, որի արդյունքում մեծացել է արտաքին առևտրի պակասուրդը: Այնուամենայնիվ, 2006թ. առաջին կեսի ընթացքում համախառն արտարժույթային պահուստներն ավելացել են 90 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված արտարժույթի մեծածավալ ներհոսքով:

1994թ. ներդրվեց ցածր դրույքաչափերով *հարկային համակարգը*: Այն զգալիորեն արդիականացվեց 1996թ., երբ ներդրվեցին ԱԱՀ-ը, եկամտահարկը, ակցիզային հարկերի համակարգը և նորացված շահութահարկը: Միաժամանակ ներդրվեց հաստատագրված վճարների համակարգ, որի նպատակն էր ընդգրկել բոլոր այն գործունեությունների տեսակները, որոնց շահութաբերությունը դժվար էր ստուգել: Համակարգը ներառեց նաև փոքր շրջանառություն ունեցող ձեռնարկատերերի համար սահմանված պարզեցված հարկը:

Բարելավվել է նաև *ծախսերի կառավարումը*, թեև խնդիրներ դեռևս առկա են: Հիմնական բարեփոխումներից էր 1997թ. գանձապետական միասնական հաշվի ներդրումը: Մինչև 2001թ. գանձապետական համակարգը թույլ էր, ինչի ապացույցն էր հսկողությունների դժվար կառավարելի համակարգը: 2002թ. սկսած համակարգը նշանակալիորեն բարելավվեց: Ներդրվեցին պարտավորությունների հսկողության ընթացակարգեր, մարվեցին բոլոր ապառքները, որից հետո նոր ապառքներ չկուտակվեցին:

ԱԱՀ-ի կողմից իրականացվող բարեփոխումների կարևորագույն ոլորտ է համարվում նաև *բանկային հատվածը*: Կենտրոնական բանկի, առևտրային բանկային գործունեության և սնանկության մասին հիմնարար օրենքներն ընդունվեցին 1996թ.: Բանկերի գործունեությանը վերաբերող կանոնակարգերը 1997թ. համապատասխանեցվեցին բազելյան հիմնական սկզբունքներին, իսկ 1998թ. ընդունվեցին բանկերի համար նախատեսված հաշվային պլանը և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ: Սակայն նվազագույն կապիտալի ավելի բարձր պահանջները և, մյուս կողմից, որոշ բանկերում տեղ գտած փոխկապակցված անձանց վարկավորումը 1999-2001թթ. դարձան առևտրային 10 բանկերի ձախողման պատճառ: Ներկայումս բանկերը փոփոխում են իրենց կանոնադրությունները՝ համապատասխանեցնելով նոր օրենսդրությանը: 2006թ. ներդրվել են համախմբված վերահսկողության ուղենիշներ, որոնց նպատակն է լիցենզավորման փուլից հետո մոնիտորինգ իրականացնել շահառու սեփականատերերի նկատմամբ, որը կօգնի ընտրել կորպորատիվ կառավարման պատշաճ կառուցվածք, և պարզել, թե փոխկապակցված ընկերությունները և անձինք ինչպես են ազդում բանկերի գործունեության վրա:

Այսպիսով, ՀՀ համար օրակարգում դրված բարեփոխումների իրականացումը և աղբատության հաղթահարման ռազմավարության ներքո նախատեսված քաղաքականության կատա-

րումը Հայաստանին հավանաբար թույլ կտան լինել ցածր եկամուտ ունեցող այն սակավաթիվ երկրներից մեկը, որոնք մոտակա 10 տարիների ընթացքում կիրականացնեն Հազարամյակի զարգացման նպատակները: Հաշվի առնելով, որ իրականացվելիք բարեփոխումներից շատերը հանդիպում են խոչընդոտների, ուստի այդ մարտահրավերների լուծումը պահանջում է առաջնորդության և քաղաքական կամքի նոր դրսևորումներ կառավարության ամենաբարձր օղակներում: Բացի այդ, Հայաստանը նաև ստանում է վարկեր ԱՄՀ-ից տարբեր ծրագրերի իրականացման համար, որոնք իհարկե հաստատված են հենց տվյալ կազմակերպության կողմից և հետևաբար նրանց ամրագրած քաղաքականությունների իրականացումն են մեր հանրապետությունում: Բայց չնայած այս ակնհայտ թելադրվող իրավիճակին՝ Հայաստանը ստիպված է ընդունել «խաղի կանոնները»՝ այլընտրանքի և ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

ԳԱՐԻԿ ԴԻԼԳՅԱՆ

ԵՊՀ հայցորդ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

Ցանկացած անցումային շրջան ունի իր ժամանակային սահմանները, և հիմա կարելի է ասել, որ Հայաստանի Հանրապետությունում այն մոտեցել է ավարտին՝ ծնելով հայրենական տնտեսության և բյուջետային համակարգում նոր բարեփոխումների անհրաժեշտություն: Բյուջետային գործընթացի ռացիոնալիզացման գլխավոր նպատակներից մեկը պետության կողմից իրականացվող ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման արդյունավետության բարձրացումն է:

Բյուջետային ոլորտում գոյություն ունեն արդյունավետության բարձրացման գործոնների տարբեր տեսակետներ: Առաջինը բխում է այն հանգամանքից, որ ավելի կարևոր գործոնը ֆինանսավորման ծավալն է, երկրորդը հիմնվում է այն ենթադրության վրա, որ էականը բյուջետային միջոցների ծախսման ուղղությունների հողվածների որոշումն է: Մեր համոզմամբ, գլխավորը ռեսուրսների բաշխման գործընթացն է:

Պետական ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը բացատրվում է դրանց բաշխման հստակ գործընթացների բացակայությամբ, բյուջետային գործընթացի բոլոր փուլերի խախտմամբ, որն էականորեն դժվարացնում է բյուջեի ձևավորման և կատարման նկատմամբ հսկողությունը: Պետական ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը կախված է նաև «արտամղման էֆեկտից», այսինքն՝ մասնավոր հատվածի տնտեսական ակտիվության անկումը կարող է լինել պետական ծախսերի բարձրացման արդյունք¹:

Բյուջետային ծախսերի օգտագործման գործընթացը պետք է կառուցվի հետևյալ սկզբունքների հիման վրա՝ բյուջետային պլանավորման համապատասխանությունը փաստացի արդյունքներին, նախատեսված ծախսային գումարների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, բյուջեի կատարման վերահսկողությունը: Բյուջետային գործընթացի ճշգրտման համար հարկ է որոշել այն հարցը, թե որ օրենսդրությամբ պետք է առաջնորդվել բյուջեի նախագծի մշակման համար. գործող, թե՞ հաշվի առնել հավանական փոփոխությունները: Ծրագրային մեթոդով բյուջեի նախագծի կազմումը բյուջետային պլանավորման եղանակներից է մեկն է: Բյուջեի նախագծի կազմումը բյուջետային գործընթացի թերևս ամենակարևոր փուլն է, քանի որ այդ ժամանակ են նախանշվում հարկաբյուջետային քաղաքականության սկզբունք-

¹ Бушмин Е. "Роль и место бюджетных процедур в системе государственных финансов", "Вопросы экономики" Москва 2001, стр. 42.